ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2022 թվականի N 179-Ա

ՀԱՍՄԻԿ ԳՈԳՈԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի N 508-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Հասմիկ Գոգոլյանին*** տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասը աշխատանքային օր՝ 2022 թվականի մայիսի 30-ից մինչև հունիսի 10-ը ներառյալ:

2. ***Հասմիկ Գոգոլյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Գայանե Գրիգորյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային ընտանեկան բուժքույր ***Գայանե Գրիգորյանին*** և «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար ***Կարեն Սահակյանին*** ապահովել «Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Սաիդա Մինասյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի մայիսի 26
ք. Հրազդան